



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 5 -Ն

ք.Ստեփանակերտ

### ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍԵՐԻՆ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 11-րդ մասին և 48-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ

1) ընտրական հանձնաժողովների նիստին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում) ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկա լինելու վերաբերյալ գրառում է կատարվում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի երկրորդ մասում՝ յուրաքանչյուրի համար նախատեսված տեղում)։

2) ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձինք հանձնաժողովի նիստերին ներկայանալիս, ինչպես նաև քվեարկության օրը տեղամասային կենտրոն մուտք գործելիս հանձնաժողովի նախագահին կամ նրան փոխարինող անձին ներկայացնում են անձը հաստատող փաստաթուղթ և (կամ) ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունքը հավաստող համապատասխան վկայական (վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի և այլն)։

3) ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում նշվում է թեկնածուի վստահված անձի անունը, ազգանունը, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անվանումը և վստահված անձի անունը, ազգանունը, իսկ դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի դեպքում՝ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության և (կամ) զանգվածային լրատվության միջոցի անվանումը և համապատասխանաբար դիտորդի և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի անունը, ազգանունը։

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ